

«ՅՈՒՆԻՏ - ԷՔՍՊՐԵՍՍ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 48-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Յունիտ-Էքսպրեսս» ախտահանիչ միջոցի կիրառման հրահանգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Հավելված

Առողջապահության նախարարի
2020թ. նոյեմբերի 05-ի
3893 - Լ հրամանի

ՀՐԱՀԱՆԳ

«ՅՈՒՆԻՏ-ԷՔՍՊՐԵՍՍ» ԱԽՏԱՀԱՆԻՉ ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Յունիտ-Էքսպրեսս» ախտահանիչ միջոցը (այսուհետ՝ միջոց) իրենից ներկայացնում է բուրանյութի հոտով անգույնից մինչև դեղին գույնի՝ օգտագործման համար պատրաստի ախտահանիչ հեղուկ: Որպես ազդող նյութ պարունակում է՝ չորրորդային ամոնիումային միացությունների համակցություն (դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ)՝ 0.3 % (գումարային), պոլիհեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդ՝ 0.2 %, N,N-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին-0.05%, ոչ իոնային մակերեսային ակտիվ բաղադրիչների համակցություն, ինչպես նաև բարդացնող և կայունացնող հավելումներ, ջուր: Միջոցի pH-ը՝ 10.0 ± 1.0 է:

2. Միջոցը թողարկվում է ցողման համար նախատեսված ամուր պտտվող գլխիկով՝ 0.1 Լ-ից մինչև 1 Լ ծավալով տարաներով՝ ցողացրման համար ծայրադիրներով կամ սերտ պտտվող կափարիչներով, 5 Լ-ից մինչև 200 Լ ծավալով պտտվող կափարիչներով տարաներով, 10×10 սմ-ից մինչև 20×20 սմ չափսերի ոչ գործվածքային նյութից անձեռոցիկի վրա 3-ից մինչև 10 գ միջոց պարունակող հերմետիկ բազմաշերտ փաթեթավորմամբ, մեկ անձեռոցիկին 3-10 գ միջոց հաշվարկով անձեռոցիկների (50-

200 հատ) ծակոտկեն գլանափաթեթի տեսքով՝ պոլիմերային բանկաների մեջ, որոնք ապահովում են հերմետիկությունը և ունեն մեկ անձեռոցիկ քաշելու համար կափարիչ:

3. Միջոցի պիտանելիության ժամկետը գործարանային փաթեթավորմամբ՝ (այդ թվում պոլիմերային տարան բացելուց հետո) 5 տարի է՝ տարայի հերմետիկությունը և միջոցի պահման պայմանները պահպանելու դեպքում: Միջոցը պահպանում է իր հատկությունները սառեցման և ապա հալեցման դեպքում:

4. Միջոցի կենսաբանական ակտիվությունը. Միջոցի աշխատանքային լուծույթն օժտված է հակամանրէային (գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ), տուբերկուլոզի հարուցչի նկատմամբ (թեստավորված է *Mycobacterium terrae*-յի վրա), վիրուսասպան (մարդու համար հայտնի բոլոր տեսակի հայտնի վիրուսախտածինների նկատմամբ, այդ թվում ընդերային և արտաընդերային հեպատիտների հարուցիչների՝ ներառյալ հեպատիտ Ա, Բ և Ց), ՄԻԱՎ-վարակի, պոլիոմիելիտի) ակտիվությամբ, սնկասպան հատկությամբ: Միջոցն ակտիվ է բորբոսասնկերի նկատմամբ: Չունի գունաթափող ազդեցություն գունավոր գործվածքների վրա, չի վնասում տարբեր մետաղներից պատրաստված արտադրանքները: Ակտիվությունը՝ ախտահանող, վացող, դեզադորացնող: Երկարատև հակամանրէային ազդեցությունը՝ 3 ժամ:

5. Թունաբանական ցուցանիշներ. Միջոցն ըստ սուր թունավորության չափանիշների, ԳՕՍՏ 12.1.007-76-ին համապատասխան, ստամոքսի մեջ ներմուծելիս պատկանում է քիչ վտանգավոր նյութերի 4-րդ դասին՝ մաշկի վրա ներգործությամբ, ներշնչական (ինհալացիոն) ազդեցության ժամանակ գոլորշիների տեսքով: Մաշկի հետ անմիջական շփման դեպքում միջոցը չունի տեղային գրգռող ազդեցություն (առանձին դեպքերում ի հայտ է գալիս մաշկի կարմրություն և գրգռվածություն), առաջացնում է աչքի լորձաթաղանթի գրգռվածություն, որը վերականգնվող է, օժտված չէ գերզգայունացնող հատկությամբ: Աէրոզոլի ձևով (ռոռգման եղանակով կիրառելիս) ծախսի նորման՝ 50 մլ/մ² գերազանցելիս կամ երկարատև ներշնչական ազդեցության ժամանակ կարող է առաջացնել գլխապտույտ և վերին շնչուղիների, աչքի լորձաթաղանթի գրգռում:

6. Սենքերում միջոցը շփելու և ոռոգման եղանակներով կիրառում են պացիենտների ներկայությամբ՝ առանց անհատական պաշտպանության միջոցների կիրառման: Միջոցը ոռոգման եղանակով օգտագործելիս՝ ծախսի 50 մլ/մ^2 նորման, ինչպես նաև մշակվող մակերեսը (առավել քան սենքի ընդհանուր տարածքի $1/5$ -ը) գերազանցելու դեպքում, մշակումը իրականացնում են մաշկի, աչքերի, շնչական համակարգի անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ՝ պացիենտների բացակայությամբ:

7. Սահմանային թույլատրելի խտությունը (ՍԹԽ) աշխատանքային գոտու օդում՝ չորրորդային ամոնիումային միացությունների համար՝ 1 մգ/մ^3 , գոլորշիները՝ 2 դասի վտանգավորություն, անհրաժեշտ է մաշկի և աչքի պաշտպանություն:

2. ՄԻՋՈՑԻ ԿԻՐԱՌՈՒՄ

8. Միջոցը նախատեսված է բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) (հիվանդանոց, պոլիկլինիկա, վերականգնողական կենտրոն, ցերեկային ստացիոնար, բուժսանմաս և բուժկետ, բուժակային և բուժակ-մանկաբարձական կետ, հեմոդիալիզի բաժանմունք, դիսպանսեր, հոսպիտալ, ատամնաբուժական կաբինետ, ծննդաբերական ստացիոնար, օրգանների փոխպատվաստման կենտրոն, արյան փոխներարկման և շտապօգնության կայան և այլն), կլինիկական, մանրէաբանական, ախտաբանանատոմիական, իմունաբանական, ախտորոշիչ և ախտաճնության 3-4 խմբերի մանրէների հետ աշխատող այլ լաբորատորիաներում, վարակիչ հիվանդությունների օջախներում, սպասարկման ոլորտի օբյեկտներում (հյուրանոց, հանրակացարան, բաղնիք, շոգեբաղնիք (սաունա), լվացքատուն, գեղեցկության սրահ, սոլյարի, պիրսինգի և դաջվածքի սրահներ, ոտնա- և մատնահարդարման սրահներ, կոսմետոլոգիական կաբինետներ, ՍՊԱ սրահներ և այլն), առողջարաններում, հանգստյան տներում, միջամտությունների կաբինետներում, ֆիզիոթերապևտիկ կաբինետներում, ջրաբուժարաններում, բժշկական կոսմետոլոգիայի կաբինետներում, հանգստյան և սպորտի կազմակերպություններում (մարզադաշտ, լողավազան, ակվապարկ, սպորտային դահլիճ, ֆիթնես կենտրոն, խաղային և զվարճանքի կենտրոն

և այլն), հասարակական շենքերում և վարչական կազմակերպություններում (ցուցահանդես, կինոթատրոն, թատրոն, թանգարան, գրադարան, առևտրի կենտրոն և այլն), հասարակական զուգարաններում, այդ թվում բիզնես-զուգարաններում, սանթոդարաններում, հանրային սննդի կազմակերպություններում (ռեստորան, սրճարան, ճաշարան, բար, բուֆետ, սննդի բլոկ, սննդի նախապատրաստման մաս և այլն), սննդարդյունաբերության և սննդի առևտրի կազմակերպություններում, դեղատներում (ներառյալ դեղատնային կրպակների և դեղերի պատրաստման բաժինների, դեղերի պահեստների), քիմիկա-դեղագործական և օժանելիքակոսմետիկական արտադրության կազմակերպություններում, այլ արտադրական կազմակերպություններում և պահեստներում, այդ թվում ցորենի, սննդամթերքի, հիգիենայի պարագաների պահեստներում, թղթային պահոցներում, սպառողական և արդյունաբերական շուկաներում, մանկական և հանրակրթական կազմակերպություններում (մանկապարտեզ, դպրոց, միջին մասնագիտացված ուսումնական հաստատություն, ԲՈՒՀ, հատուկ մասնագիտացված ուսումնական հաստատություն, երեխաների հատուկ հաստատություններ (մանկատուն, տուն-ինտերնատ, մանկական առողջարան և այլն)), սոցիալական ապահովման հաստատություններում (հոսպիս, պալիատիվ խնամքի կենտրոն, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատ և այլն), քրեակատարողական հիմնարկներում, դատա-բժշկական փորձաքննության կազմակերպություններում և օբյեկտներում, դիախերձարաններում, հուղարկավորության արարողությունների կազմակերպման հաստատություններում (դիակիզարան, կոլումբարիում), ջրամատակարարման օբյեկտներում և էներգոցանցներում, ՊՆ, ԱԽՆ, ոստիկանության և այլ գերատեսչություններին պատկանող օբյեկտներում, սանիտարական տրանսպորտի, սննդամթերքի տեղափոխման տրանսպորտի, քաղաքային վերգետնյա և էլեկտրատրա- ուղևորատրանսպորտի, բեռնափոխադրող տրանսպորտի, ավտոտրանսպորտային արտադրություններում, մաքրող կազմակերպությունների կողմից մաքրման վայրերում, մարդկանց զանգվածային կուտակումների վայրերում, ինչպես նաև այլ համաճարակային նշանակություն ունեցող օբյեկտներում, որտեղ պահանջվում է ախտահանման աշխատանքների իրականացում՝ գործող

նորմատիվների համապատասխան, ինչպես նաև ազգաբնակչության կողմից՝ կենցաղում օգտագործելու համար:

9. Միջոցը պատրաստի օգտագործման լուծույթ է՝ այն չի թույլատրվում նոսրացնել կամ ակտիվացնել:

10. Միջոցի աշխատանքային լուծույթները նախատեսված են մակերեսների և առարկաների կանխարգելիչ, ընթացիկ, եզրափակիչ ախտահանման՝ (ներառյալ՝ լվացումը, դեզադորացումը) և հիմնական մաքրման համար՝

- 1) Լայն սպեկտրի համաճարակաբանական նշանակություն ունեցող մակերեսներ, ներառյալ դժվարամատչելի, հաճախ ձեռքերի, մաշկի հետ շփվող կամ կենսաբանական հեղուկներով աղտոտված (դռան բռնակ, ճաղեր, անջատիչ և այլն),
- 2) Կահավորանք՝ (կոշտ և փափուկ կահույք), ներառյալ բժշկական սեղանների մակերեսները (ծննդաբերական, բարուրասեղան, վիրաբուժական, միջամտությունների, հատվածային, մերսման), գինեկոլոգիական և ատամնաբուժական աթոռներ, պատգարակ, մահճակալ, վերակենդանացման ներքնակներ, բազկաթոռ, բազմոցներ (ներառյալ մերսման և կոսմետիկ միջամտությունների համար նախատեսված),
- 3) Ցանկացած գործունեություն իրականացնող կազմակերպությունների և հաստատությունների սառցարանային սենյակներ, սառնարանային սարքեր և սարքավորումներ,
- 4) Օդորակման և օդափոխանակության համակարգ,
- 5) Սանիտարատեխնիկական սարքավորումներ (այդ թվում, չուգունե և ակրիլից պատրաստված վաննաներ, ջրաբուժարանային, բուժիչ, ցեխային, հանքային, ջրամերսման և այլ լոգախցիկներ, ՍՊԱ պատիճներ և այլն),
- 6) Սանիտարական սարքավորումների առանձին տարրեր (խողովակներ, ծորակներ, խառնիչներ);
- 7) Վիրահատարաններ, մանրէասպան լամպեր և լուսավորության այլ սարքավորումներ,

- 8) Պատուհանի շերտավարագույրներ, տեսողական պաշտպանության համակարգեր (էկրաններ, միջնապատեր),
- 9) Հիվանդի խնամքի պարագաներ, ինչպես նաև բժշկական կազմակերպություններում օգտագործվող այլ պարագաներ (անձնական հիգիենայի միջոցներ, ռետինե և պոլիպրոպիլենային գորգեր, մոմլաթե տակդիրներ),
- 10) Կոշկեղեն, ռետինե և այլ պոլիմերային նյութերից պատրաստված գորգեր, խաղալիքներ, սպորտային գույք
- 11) Մակերեսներ, որոնք պարունակում են կենսաբանական հեղուկներ՝ այդ թվում՝ արյուն, մեզ, կղանք, խորխ, էնդոտրախեալ ասպիրատ, փսխման զանգված, ողնուղեղային հեղուկ, ներվիրահատական նյութ, դրենաժային նյութ,
- 12) Ձեռնոցներ (քլորոպրենային կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլից և քիմիական նյութերին դիմացկուն այլ նյութերից),
- 13) Գրասենյակային սարքավորումներ (հեռախոս, ստեղնաշար, մոնիտոր, տպիչ, պատճենահանող սարք, սկաներ, փաստաթղթեր մանրացնող սարք և այլն),
- 14) Թղթադրամների և մետաղադրամների հաշվիչներ, արժույթների և ակցիզային դրոշմանիշների դետեկտորներ, արխիվային պահարաններ, դարակաշարեր,
- 15) Տրանսպորտի և սարքավորումների մակերեսներ (սանիտարական, քաղպաշտպանության ծառայության, սննդամթերքի տեղափոխման, ուղևորատար, բեռնատար և այլն), երկաթուղային և ջրային տրանսպորտ, օդային տրանսպորտի ցամաքային օբյեկտներ, մետրոպոլիտեն,
- 16) Ավտոնոմ զուգարանների խցիկի մակերես:

11. Միջոցը կարող է օգտագործվել ախտահանման գորգերի, ախտահանիչ պատնեշների հետ միասին: Միջոցի աշխատանքային լուծույթները նախատեսված են նաև բժշկական և այլ նշանակության (ներառյալ ֆիզիոթերապևտիկ և ախտորոշիչ) արտադրանքի ախտահանման համար

- 1) սարքեր և սարքավորումներ, կառուցվածքային բարդ սարքավորումների և սարքերի տարրեր՝ սարքերի և սարքավորումների մակերեսներ, ներառյալ բժշկական սարքավորումների կառավարման վահանակներ,

- 2) սարքերի և սարքավորումների ապամոնիտաժման մասեր (ներառյալ ջերմաանկայուն նյութերից պատրաստված), բաղադրիչ մասեր, առանձին միավորներ և ապարատների բլոկներ,
 - 3) չվնասված մաշկի հետ շփվող մոնիտորներ, տվիչներ, մալուխներ, կցորդներ, ախտորոշիչ սարքերի և սարքավորումների էլեկտրոդներ (ուլտրաձայնային, կարդիոգրաֆ, էնցեֆալոգրաֆներ և այլն)՝ բացառությամբ լորձաթաղանթի հետ շփվող տվիչների, որոնք ենթակա են բարձր մակարդակի ախտահանման,
 - 4) ֆիզիոթերապևտիկ սարքավորումների տվիչներ, ռենտգենյան սարքավորումների տարրեր և պարագաներ՝ ներառյալ ռենտգենյան ժապավենները,
 - 5) կուվեզներ և նրա պարագաներ, մահճակալներ,
 - 6) անզգայացման և շնչառական ու ինհալացիոն սարքավորումների բաղկացուցիչ մասեր, անզգայացման սարքավորումներ
 - 7) ստետոսկոպներ, ֆոնենդոսկոպներ, տոնոմետրեր՝ ներառյալ տոնոմետրի ժապավենի ներքին կողմերը, զարկերակային օքսիմետրեր, գլյուկոմետրեր, բժշկական ջերմաչափեր
 - 8) էնդոսկոպիկ միջամտություններից հետո ախտահանման ենթակա էնդոսկոպերի մակերեսներ,
 - 9) լաբորատոր սարքեր և սարքավորումներ,
 - 10) ապարատային կոսմետոլոգիայի սարքավորումներ՝ ֆոտոթերապիայի, դաջվածքների լազերային հեռացման, մաշկի ձգման ռադիոհաճախականության, հարվածալիքային թերապիայի, կավիտացիայի, լազերային մազահեռացման սարքավորումներ:
12. Միջոցի աշխատանքային լուծույթները նախատեսված են նաև տարբեր նյութերից կազմված բժշկական նշանակության իրերի՝ ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական գործիքների (այդ թվում միկրովիրաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական), էնդոսկոպիկ գործիքների նախնական մաքրման, ախտահանման և նախամանրէազերծման համար, այդ թվում նաև ախտահանումը նախամանրէազերծման հետ համակցված մեկ փուլում կիրառելու համար: Հիմնական

մաքրման և եզրափակիչ ախտահանման ժամանակ կիրառվում են հատուկ ցողիչ սարքերով (աերոզոլային գենրատորներ) օդի ախտահանման և դեզադորացման համար, ինչպես նաև բժշկական թափոնների և աղբահավաքների ախտահանման համար:

- 1) Ե և Ե դասի թափոններ՝ (միանվագ օգտագործման բժշկական արտադրատեսակներ, վիրակապական նյութ, միանվագ օգտագործման անկողնային և անհատական սպիտակեղեն՝ նախքան դրանց օգտահանելը, ինչպես նաև թափոնների հավաքման բազմակի օգտագործման տարրեր,
 - 2) Կենսաբանական նյութ, այդ թվում առանձին հավաքագրված (ներառյալ արյուն և դրա շիճուկ և պլազմա, մեզ, կղանք, ողնուղեղային հեղուկ, վիրահատական նյութ, դրենաժային արտադրություն, ախտաբանաանատոմիական թափոնների (հյուսվածքներ, էրիթրոցիտար զանգված, հարպտոլային հեղուկ, էնդոսկոպների լվացման ջուր, պատվաստանյութ, լաբորատոր նմուշներ և այլն) և դրանց հավաքման տարողություններ),
 - 3) Թափոնների (A, Ե, B) հավաքման բազմակի օգտագործման տարրեր
 - 4) Բնակելի, վարչական և հասարակական շենքերի աղբահանության համակարգերի, ներառյալ թափոնների հավաքման սարքավորումները, աղբատար մեքենաների, աղբամանների, աղբատարերի ախտահանման համար,
13. Միջոցը նախատեսված է նաև կենցաղում օգտագործելու համար՝ համաձայն միջոցի վրայի մակնշման պիտակի:
14. Միջոցի կիրառման եղանակներն ու պահպանման ժամկետները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Միջոցի կիրառման եղանակներն ու պահպանման ժամկետները

Միջոցն արտադրողի փաթեթավորմամբ (այդ թվում՝ բացելուց հետո)	5 տարի
Միջոց՝ ախտահանման նպատակով, շփման կամ ոռոգման եղանակներով կիրառելու համար:	Մեկ անգամ

Միջոց՝ «Էսթետիկ» մաքուր առարկաների ախտահանման համար:	30 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Միջոց՝ վիրաբուժական, միկրովիրաբուժական, գինեկոլոգիական, ատամնաբուժական, կոսմետոլոգիական նշանակության բժշկական արտադրատեսակների ախտահանման նպատակով կիրառելու համար:	30 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Միջոց՝ վիրաբուժական, միկրովիրաբուժական, գինեկոլոգիական, ատամնաբուժական, կոսմետոլոգիական նշանակության բժշկական արտադրատեսակների նախամանրէազերծումն ախտահանման հետ մեկ փուլում համակցված կիրառելու համար:	30 օրվա ընթացքում՝ բազմակի կիրառում
Ատամնապրոտեզների ծեփապատճենի ախտահանում	Բազմակի՝ 7 օրվա ընթացքում (մշակման ենթակա է ոչ ավել քան 50 տպվածք)

Նշում* Միջոցը պահվում է ապակուց, պլաստմասսե կամ էմալապատ (առանց վնասված էմալի) կափարիչով տարայում՝ սենյակային ջերմաստիճանում՝ արևի ճառագայթներից պաշտպանված վայրերում: Միջոցի տարաները ունենում են հստակ մակնշում՝ միջոցի անվանման, խտության (օգտագործվում է միայն 100% չնոսրացված միջոց), կիրառման նպատակի, պատրաստման ամսաթվի և պիտանելիության ժամկետի վերաբերյալ: Արտաքին տեսքի փոփոխության առաջին նշանների դեպքում (լուծույթի գունաթափում, պղտորում և այլն) միջոցը փոխվում է:

3. ՄԻՋՈՑՈՎ ՏԱՐԲԵՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Միջոցի կիրառմամբ բժշկական և այլ կազմակերպություններում սենքերի, սարքավորումների և տարբեր օժանդակ օբյեկտների մակերեսների ախտահանման ժամանակացույցը սահմանվում է գործող սանիտարական նորմերին և կանոններին համապատասխան:

16. Միջոցի կիրառմամբ ԲԿ-ում ձեռքերի, մաշկի հետ շփվող կամ կենսաբանական հեղուկներով պոտենցիալ աղտոտված համաճարակաբանական նշանակություն

ունեցող մակերեսների ախտահանման ժամանակացույցը սահմանվում է ԲԿ-ի յուրաքանչյուր կոնկրետ ստորաբաժանման շրջանակներում՝ ստեղծված համաճարակաբանական իրավիճակին համապատասխան:

17. Մշակման հաճախականությունը (բազմապատիկությունը) սահմանվում է յուրաքանչյուր կոնկրետ օբյեկտի համար՝ կախված հետևյալ սուբյեկտիվ գործոններից (որոնք ազդում են շրջակա օբյեկտների միկրոօրգանիզմներով աղտոտման վրա՝

- 1) ձեռքի հետ շփման հաճախականությունը, որոնք ախտածին միկրոօրգանիզմների պոտենցիալ փոխանցողներն են,
- 2) բուժանձնակազմի և պացիենտների հոսքայնություն,
- 3) մակերեսների վրա կենսաբանական հեղուկների առկայություն:

18. Միջոցի կիրառմամբ օբյեկտները մշակում են ցողման, շփման, ընկղման եղանակներով:

19. Մակերեսների մշակման ժամանակ միջոցի ծախսի նորմաներն են՝

- 1) միջոցով թրջված լաթով շփման և ոռոգման եղանակով՝ 40-50 մլ/մ² մակերեսների,
- 2) 3-ից 5 մլ քանակի միջոցով ներծծված անձեռոցիկով մշակվում է ոչ ավել, քան 0,1 մ² մակերես,
- 3) 5 մլ-ից ավելի, բայց 10 մլ-ից պակաս տոգորմամբ անձեռոցիկով մշակում են 0,2 մ²-ից ոչ ավելի մակերես,
- 4) 10 մլ տոգորմամբ անձեռոցիկով մշակում են 0,25 մ²-ից ոչ ավելի մակերես:
- 5) Ոռոգման եղանակով մշակվող մակերեսի առավելագույն թույլատրելի մակերեսը կազմում է ոչ ավելի, քան սենքի ընդհանուր մակերեսի 1/5-ը:
- 6) Տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

20. Մշակման մեթոդաբանություն՝ մակերեսների ախտահանումը միջոցի կիրառմամբ իրականացվում է՝

- 1) Շփման եղանակով՝ միջոցով թրջված լաթով կամ միջոցով ներծծված անձեռոցիկով,
- 2) Ոռոգման եղանակով 30 սմ հեռավորությունից՝ ցողացրման ծայրադիրի միջոցով (հավասարաչափ՝ առանց բացթողումների), նվազեցնելով հեղուկի

ցումը և աէրոզոլների առաջացումը (կենսաբանական հեղուկի առկայությամբ մակերեսների ախտահանման ժամանակ),

3) պահում են միջոցը մակերեսի վրա ազդեցության (էքսպոզիցիայի) նշված ժամանակի ընթացքում:

4) Միջոցով ախտահանման ազդեցության պահաժամի ավարտից հետո, միջոցի մնացորդը հեռացվում է ջրով կամ խոնավ անձեռոցիկով: Խոնավ մաքրման անհնարինության դեպքում միջոցի մնացորդը ամբողջությամբ մաքրվում է մակերեսից,

5) Մշակելուց հետո լորձաթաղանթների հետ անմիջական շփման մեջ գտնվող մակերեսները լվացվում են թորած ջրով և չորացվում մանրէազերծ անձեռոցիկով:

21. Սենքերի մակերեսներն են՝ հատակ, պատեր, պատուհան, այդ թվում շերտավարագույր, միջնապատ, շարժական միջնապատ, դռներ, կահույք, սարքեր, սարքավորումներ, կահավորանք և այլն:

22. Մակերեսները և օբյեկտները, որոնք աղտոտված չեն կենսաբանական հեղուկներով, սրբում են միջոցով ներծծված անձեռոցիկով կամ ոռոգում են ձեռքի ցողացրիչով: Միջոցի ազդեցության պահաժամը ներկայացված է սույն հրամանի Աղյուսակ 1-ում:

23. Մակերեսները և օբյեկտները, որոնք աղտոտված են փոքր քանակությամբ կենսաբանական հեղուկներով (արյան, թքի, մեզի և այլ կենսաբանական հեղուկների կաթիլ, ցայտեր՝ այդ թվում չորացած) մշակում են երկու փուլով՝ առանց մշակումների միջև ժամանակային ընդմիջման:

1) Առաջին փուլ՝ մակերեսի նախնական մաքրում՝ մակերեսը ծածկում են միջոցով, թույլ չտալով ցայտումը՝ ախտահանիչ միջոցով մակերեսը մաքրելով արտաքին եզրերից դեպի կենտրոն: Միջոցի ազդեցության պահաժամի ավարտից հետո ախտահանված կենսաբանական հեղուկը հեռացնում են միջոցով ներծծված գործվածքով կամ անձեռոցիկով կամ միանվագ օգտագործման անձեռոցիկով (թղթից կամ կտորից):

2) Երկրորդ փուլ՝ մակերեսների ախտահանում՝ մակերեսը կրկնակի մշակվում է միջոցով՝ պահպանելով միջոցի ազդեցության պահաժամը՝ համաձայն սույն հրամանի

Աղյուսակ 1-ի: Ախտահանման ավարտից հետո մակերեսից միջոցի մնացորդները հեռացնելու համար մակերեսը ենթարկում են խոնավ մաքրման:

24. Մակերեսները, որոնց վրա առկա է կենսաբանական հեղուկի թափվածք (արյուն, մեզ՝ միայն առանձին տարայում հավաքելուց հետո, փսխման զանգված և այլն), ախտահանում են երկու փուլով:

1) Առաջին փուլի ընթացքում իրականացվում է թափվածքի մեխանիկական մաքրում՝ նախնական ախտահանմամբ: Մեծ քանակի թափվածքներն ապակաթիվացնում են ախտահանիչ նյութերը՝ անարդյունավետ դարձնելով ախտահանումը: Թափվածքի դեպքում անհրաժեշտ է այն հավաքել սորբենտների միջոցով: Չեզոք սորբենտը (օրինակ՝ միանգամյա օգտագործման թուղթ կամ անձեռոցիկ) տեղադրվում է անմիջապես թափվածքի վրա՝ մինչև թափվածքի ամբողջովին ներծծումը: Օգտագործված սորբենտի քանակը պետք է բավարար լինի թափված հեղուկն ամբողջությամբ կլանելու համար: Մակերեսը մշակում են միջոցով՝ մակերեսի արտաքին եզրերից դեպի կենտրոն ուղղությամբ՝ թույլ չտալով ցայտումները, մինչև միջոցի ներծծվելը: Պահվում է միջոցի ազդեցության պահաժամը՝ համաձայն սույն հրամանի Աղյուսակ 1-ի, այնուհետև ախտահանված կենսաբանական հեղուկը սորբենտի հետ միասին հեռացվում է լրացուցիչ սարքերով՝ գոգաթիակով, խոզանակով, արքանով: Որպես սորբենտ կարելի է օգտագործել հատիկավոր կամ փոշենման ախտահանիչ միջոցներ, որոնք սահմանված կարգով գրանցված են Եվրասիական տնտեսական միության տարածքում: Այս դեպքում մակերեսի վրա թափվածքի լրացուցիչ ծածկում միջոցով չի պահանջվում:

2) Երկրորդ փուլ՝ մակերեսի ախտահանում՝ մակերեսը կրկնակի մշակվում է միջոցով՝ պահպանելով միջոցի ազդեցության պահաժամը՝ համաձայն սույն հրամանի Աղյուսակ 1-ի: Ախտահանման ավարտից հետո մակերեսից միջոցի մնացորդները հեռացնելու համար մակերեսը ենթարկում են խոնավ մաքրման: Մակերեսի վրայից կտրող-ծակող իրերը հեռացվում են լրացուցիչ սարքերով՝ գոգաթիակով, խոզանակով, արքանով կամ ունելիով:

25. Ցանկացած ծակող-կտրող իրերի (կտրված ապակի, ասեղներ և այլն), որոնք կարող են առկա լինել աղտոտված մակերեսին, մաքրման ժամանակ անհրաժեշտ է

օգտագործել օժանդակ հարմարանքներ (գոգաթիակ, խոզանակ, արքան կամ ունելի): Ձեռքով դրանք հավաքել չի թույլատրվում՝ մաշկի վնասումից խուսափելու համար: Որոշ դեպքերում, աղտոտվածության արդյունավետ հեռացման համար կարող է պահանջվել խոզանակ (օրինակ՝ երբ կենսաբանական հեղուկները թափվել են ծակոտկեն, անհարթություններով մակերեսների վրա (բետոն և այլն)) կամ լրացուցիչ լվացող միջոցներ (գորգերի, փափուկ կահույքի պաստառի և այլնի մաքրման ժամանակ): Գորգերի կամ փափուկ կահույքի վրա արյան և կենսաբանական արտադրության թափման դեպքում ձեռքային մաքրումը պետք է ուղեկցվի գոլորշիով կամ քիմիական մաքրմամբ:

26. Մակերեսի վրա թափվածքի ստանդարտ հավաքածու՝ ախտահանիչ միջոց, քիմիական և կենսաբանական ազդակներին կայուն ձեռնոցներ, թափոնների հեռացման պարկեր և կենսաբանական վտանգի նշան, սրածայր թափոնների համար նախատեսված փակ ամուր տարողություն, մաքրման պարագաներ՝ գոգաթիակ, արքան և այլն:

27. Աղտոտված (օրինակ ժանգոտված, կրաքարի առկայությամբ և այլն) սանիտարատեխնիկական սարքավորումները (լոգարան, լվացարան, զուգարանակոնք, միզարան, ցնցուղ, լոգախցիկ, բալնեոլոգիական սարքավորում և այլն) նախօրոք մաքրում են թթվային մաքրող միջոցներով: Դրանց ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի Աղյուսակ 1-ում:

28. Զուգարանակոնքերի, միզարանների արդյունավետ մշակման համար անհրաժեշտ է նվազեցնել դրանց մակերեսների կենսաբանական աղտոտվածությունը՝ զուգարանակոնքի պարունակությունը հեռացնում են ջրով, միջոցը լցնում զուգարանակոնքի մակերեսին, որից հետո մեկ րոպե տևողությամբ իրականացնում են մեխանիկական եղանակով մաքրում համապատասխան սարքի կիրառմամբ: Մաքրումից հետո միջոցը պահում են սույն հրահանգի Աղյուսակի 1-ի պահաժամին համապատասխան և լվանում են ջրով: Ախտահանման ավարտին տարածքն օդափոխվում է:

29. Լոգարանների (չուգունե, էմալպատ, ակրիլե) և լվացարանների մշակումը իրականացվում է՝ նախնական 1 րոպե մեխանիկական մաքրումից հետո սարքերի

մակերեսին միջոցով թրջված սպունգի կամ լաթի միջոցով՝ ուշադրություն դարձնելով առավել դժվար հասանելի հատվածներին: Միջոցը պահում են մակերեսին ազդեցության պահաժամին համապատասխան՝ համաձայն սույն հրամանի Աղյուսակ 1-ի: Միջոցի մնացորդները մաքրում են ջրով, տարածքն օդափոխվում է:

30. Պացիենտի խնամքի պարագաները (մահճակալի հարմարանքներ, զուգարանի նստոց, նստելատեղ, աստիճան և հարթակ լոգարանի համար, ռետինե գորգեր, զուգարանակոնքի գլխադիր, հենարան զուգարանի համար, սառույցի պարկ, ջեռակ, տակդիր օղեր, շարժական աթոռ-զուգարան, գիշերանոթ, տականոթ, միզընդունիչ (այդ թվում տարաներ զուգարանային պարագաների ախտահանման համար), պոլիմերային պաշտպանիչ ծածկույթներ ներքնակների համար, տակդիր մոմլաթ, մոմլաթե պարկեր կեղտոտ սպիտակեղենի համար, մոմլաթե դռշիկ, պացիենտի տեղափոխման հարթակներ, հաշմանդամի սայլակ, ձեռնափայտ, հենակ, քայլակ, մերսիչ, բռնակ, թեքահարթակ), ինչպես նաև ռետինե և կիրգայե կոշիկներ, պոլիմերային նյութերից, կաշվից և կաշվի փոխարինիչից հողաթափեր, մանկական խաղալիքներ (փայտե, պլաստմասե, ռետինե, մետաղական), ռետինե ձեռնոցներ, ներառյալ ձեռքերի վրայի ձեռնոցները ախտահանվում են հետևյալ կերպ՝ փոքր չափի առարկաները ընկղմում են միջոցի մեջ, իսկ մեծ չափի առարկաները, ինչպես նաև կոշիկի ներքին և արտաքին մակերեսները, որոնք հնարավոր չէ ընկղմել, սրբում են միջոցով թրջված լաթով կամ ոռոգում են սույն հրամանի Աղյուսակ 1-ով սահմանված ռեժիմին համապատասխան: Միջոցի ազդեցության պահաժամի ավարտից հետո առարկաները լվանում են ջրով 3 րոպե տևողությամբ և չորացնում:

31. Արյունով կամ կենսաբանական հեղուկներով աղտոտված ձեռնոցները նախքան հանելը մաքրում են միջոցով թրջված անձեռոցիկով: Մանրէաբանական լաբորատորիայի (ներառյալ պալարախտը), վիրուսային և սնկային հիվանդությունների հարուցիչների հետ աշխատելիս բուժաշխատողները ձեռնոցները (քլորոպրեն կաուչուկից, լատեքսից, նեոպրենից, նիտրիլե և այլ նյութերից պատրաստված ձեռնոցները, որոնք կայուն են քիմիական նյութերի նկատմամբ) կիրառելիս մինչև հանելը ախտահանում են՝ ընկղմելով ձեռքերը միջոցով լցված տարայում սույն հրամանի

Աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմին համապատասխան, որից հետո ձեռնոցները հանում են և տեղադրում բժշկական թափոնների հավաքման տարայում:

32. Մաքրող պարագաները՝ խոզանակ և հատակմաքրիչ, ֆլաունդեր, մոպ, գոգաթիակ, սայլակ, դույլ, զամբյուղ և բաք, ինչպես նաև հավաքման մեքենաների տարբեր մասեր և հավաքման տարբեր պարագաներ, սեղանի մակերեսները լվանալու համար մաքրող պարագաները ախտահանվում են՝ փոքր առարկաներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցով լցված տարայում, բացառելով վերջիններիս վեր բարձրանալը, ընկղմում են միջոցի լուծույթի մեջ այնպես, որ առարկաները 1 սմ-ից ոչ պակաս շերտով ծածկվեն: Մեծ առարկաները սրբվում են միջոցով ներծծված անձեռոցիկով կամ ոռոգվում՝ համաձայն սույն հրամանի Աղյուսակ 1-ի ռեժիմների: Գործվածքից կազմված առարկաները մշակում են ընկղմման եղանակով՝ 1 կգ չոր գործվածքին 5 լ աշխատանքային հեղուկ հաշվարկով, պահաժամից հետո առարկաները լվանում են ջրով:

33. Օդափոխման և օդորակման համակարգերի (կենցաղային օդորակիչներ, տանիքի օդորակիչներ և այլն) ախտահանումը, տհաճ հոտերի չեզոքացումը և դեզադորացումն իրականացվում է մարդկանց բացակայությամբ՝ համապատասխան տեխնիկական սարքավորումների (օրինակ՝ աէրոզոլների գեներատորներ և այլն) օգնությամբ, միջոցի փոշեցրման եղանակով՝ ըստ Աղյուսակ 2-ում նշված ռեժիմների՝ միջոցի ծախսի նորման 10 մլ/մ³: Նախապես իրականացնում են մակերեսների ախտահանում և սենքի հերմետիկացում՝ փակում են պատուհաններն ու դռները, անջատում ներիռու-արտաձիգ օդափոխությունը: Ախտահանումից հետո սենքն օդափոխում են առնվազն 15 րոպե:

34. Սանիտարական փոխադրամիջոցի ախտահանումն իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով՝ սույն հրահանգի Աղյուսակ 1-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Վարակիչ հիվանդ, աղտոտված սպիտակեղեն և բժշկական նշանակության արտադրատեսակներ տեղափոխող փոխադրամիջոցների ախտահանումն իրականացվում է՝ հաշվի առնելով արտաքին և ներքին մակերեսների աղտոտվածության աստիճանը:

35. Հասարակական տրանսպորտն ախտահանվում է մանրէների ոչնչացումն ապահովող ռեժիմներով: Մակերեսները, որոնք ունեն ձեռքերի հետ հաճախակի շփում (բազրիքներ, արմնկակալներ և այլն), մշակվում են սնկային վարակների ախտահանման համար առաջարկվող ռեժիմների համաձայն (Աղյուսակ 1): Վիրուսային հիվանդությունների համաճարակների ժամանակ հասարակական տրանսպորտի մակերեսը ախտահանում են վիրուսների ոչնչացումն ապահովող ռեժիմներով (Աղյուսակ 1):

36. Բժշկական թափոնների ախտահանումը բժշկական և այլ կազմակերպություններում իրականացվում է համաձայն գործող սանիտարական կանոնների և նորմերի պահանջների: Միջոցը կիրառվում է հետևյալ թափոնների և տարաների ախտահանման համար՝

1) կենսաբանական հեղուկներով աղտոտված մետաղներից, ապակուց, պլաստմասսայից, ռետինից մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ,

2) վիրակապեր, մեկանգամյա օգտագործման ներքնազգեստներ, անձնակազմի հագուստ և կենսաբանական հեղուկներով աղտոտված այլ գործվածքային ապրանքներ,

3) հեղուկ թափոններ, լվացման ջրեր, ներառյալ հեղուկը՝ կոկորդը լվանալուց հետո,

4) կենսաբանական նյութեր (մեզ, կղանք, խորխ, էնդոտրախեալ ասպիրատ, փսխման զանգված, ողնուղեղային հեղուկ, վիրահատական նյութ, լվացման ջրեր, ներառյալ էնդոսկոպիկ, ախտաբանաանատոմիական, օրգանական վիրաբուժական թափոններ (օրգաններ, հյուսվածքներ և այլն)), արյուն և արյան հետ խառնված կենսաբանական հեղուկներ), ինչպես նաև սննդի մնացորդներ,

5) Աղբամաններ, թափոնների հավաքման տարաներ, աղբարկղեր,

6) Բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացառությամբ վարակիչ, մաշկա-վնեռական, հակատուբերկուլոզային) A դասի թափոնների, ոչ վարակիչ թափոնների (վարակիչ հիվանդների, պացիենտների կենսաբանական հեղուկների հետ շփում չունեցած) հավաքման բազմակի օգտագործման տարաներ,

7) B և B դասի թափոնների հավաքման տարա, աղբատար մեքենայի թափք,

8) Պացիենտի կենսաբանական հեղուկների հավաքման տարաներ, լաբորատոր սպասք և մակերես, որտեղ վերցրել են նմուշը,

9) Խորխից մաքրված թթամաններ

10) Լվացման ջրեր, որոնք առաջանում են բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված մաքրման փուլում ախտահանիչներով աշխատելիս:

37. Ե և B դասի թափոններն ախտահանվում են թափոնների առաջնային հավաքման տեղերում, ախտահանիչ լուծույթի մեջ ընկղմման եղանակով, հատուկ առաձնացված տարայի մեջ, մեկանգամյա փաթեթով փաթեթավորումից անմիջապես առաջ: Հատուկ ուշադրություն է դարձվում մեծ քանակի կենսաբանական հեղուկներ պարունակող հեղուկ և պինդ թափոններին:

38. Բժշկական կազմակերպության բոլոր բաժանմունքների (բացառությամբ վարակիչ, մաշկա-վեներական), հակատուբերկուլոզային, A դասի թափոններն ամեն օր լվացվում և ախտահանվում են շփման, ընկղմման և ոռոգման եղանակներով:

39. Կեղտաջրերն ախտահանելուց հետո լցվում են կոյուղի: Թափոնների և տարաների ախտահանումն իրականացվում է ըստ սույն հրահանգի Աղյուսակ 5-ում ներկայացված ռեժիմների:

40. Բնակելի, վարչական և հասարակական շենքերի աղբահանության համակարգերի, այդ թվում՝ աղբահավաք սարքավորումների, աղբատար մեքենաների, աղբամանների, աղբահավաք կոնտեյներների, աղբահավաքատեղիների, աղբատար խողովակների, ինչպես նաև կոյուղու արտահոսք չունեցող ավտոնոմ զուգարանների մակերեսների ախտահանման ռեժիմները ներկայացված են Աղյուսակ 5-ում:

41. Միջոցը կիրառում են ախտահանիչ գորգերի, ներքնակների և պատնեշների լուծույթով տոգորման համար: Լուծույթի ծավալը կախված է արտադրատեսակի չափսերից և նշված է ախտահանիչ գորգին կից կիրառման հրահանգում: Աշխատանքային լուծույթի փոխելու հաճախականությունը կախված է գորգի գործածման ինտենսիվությունից (միջինը՝ 3 օրը 1 անգամ): Ախտահանիչ պատնեշում ախտահանիչի կիրառման կարգը նկարագրվում է արտադրողի հրահանգում:

42. Ախտահանման միջոցառումները կոմունալ, մշակութային, կենցաղային, վարչական, արտադրական և արդյունաբերական օբյեկտներում, հանրային սննդի, սննդի արդյունաբերության, պարենային և դեղատնային առևտրի, քիմիադեղագործական արդյունաբերության ձեռնարկություններում, մանկական, հանրակրթական հաստատություններում, հանրային տրանսպորտում, մարդկանց զանգվածային կուտակման վայրերում իրականացվում են համաձայն ռեժիմների, որոնք ապահովում են մանրէային ծագման վարակների նկատմամբ ախտահանում (Աղյուսակ 1):

43. Սպորտային-առողջարարական հաստատություններում (մարզահամալիր, լողավազան, ջրաշխարհ, մարզասրահ և այլն), բնակչության սպասարկման ձեռնարկությունների (բաղնիք, սաունա, վարսավիրանոց, գեղեցկության սրահ և այլն) օբյեկտների ախտահանումն իրականացվում է ըստ սնկային վարակների ժամանակ խորհուրդ տրվող ռեժիմների (Աղյուսակ 1):

44. Քրեակատարողական հիմնարկներում (բանտ, գաղութ, ճամբար) օբյեկտների ախտահանումն իրականացվում է ըստ տուբերկուլյոզի ժամանակ խորհուրդ տրվող ռեժիմների (Աղյուսակ 1):

45. Ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակի (ՆՀՎ) հարուցչի հայտնաբերման ժամանակ, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) լայն դեղորայքակայուն շտամները, պացիենտի հետ շփում ունեցող բոլոր օբյեկտների (ներառյալ սենքերի մակերեսները, կահավորանքի և խնամքի պարագաները, բժշկական արտադրատեսակները, արտադրությունները և կենսաբանական հեղուկները, բժշկական թափոնները) ախտահանումն իրականացնում են սույն հրահանգի աղյուսակ 6-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

46. Ճկուն և կոշտ էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրում. Մշակման մեթոդաբանություն՝ էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումը իրականացվում է առանձին: Սարքավորման մշակումը սկսում են անմիջապես էնդոսկոպիական միջամտություն իրականացնելուց հետո՝ թույլ չտալով կենսաբանական աղտոտվածությունների չորացում: Տեսանելի աղտոտվածությունները

Էնդոսկոպի արտաքին մակերեսից, այդ թվում օբյեկտիվից, հեռացնում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով: Էնդոսկոպի աշխատանքային մասը շփում են կառավարման բլոկից դեպի դիստալ հատված ուղղությամբ: Էնդոսկոպի խողովակները լվանում են միջոցի աշխատանքային լուծույթով, ընկղմելով լուծույթով տարայի մեջ ճկուն Էնդոսկոպի դիստալ հատվածը: Արտադրատեսակը լվանում են խմելու ջրով: Նախնական մաքրումից հետո Էնդոսկոպն անջատում են սնուցման աղբյուրից և Էնդոսկոպիական արտածծիչից, տեղափոխում են մշակման սենք, պահպանելով հակահամաճարակաբանական միջոցառումները (փակ վիճակով տեփուրի վրա կամ կոնտեյնների մեջ): Էնդոսկոպին կից գործիքներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ: Արտադրատեսակները մաքրում են միջոցի լուծույթի մեջ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտերի առաջացում: Արտադրատեսակների խողովակները լվանում են ներարկիչով կամ այլ հատուկ հարմարանքներով: Մաքրումից հետո Էնդոսկոպների կից գործիքները լվանում են խմելու ջրով: Ճկուն և կոշտ Էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախնական մաքրման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի սխեմաներ 3,4-ում:

47. Ճկուն և կոշտ Էնդոսկոպների և դրանց կից գործիքների նախամանրէագերծում, այդ թվում համակցված ախտահանման հետ: Մշակման մեթոդաբանություն՝ Էնդոսկոպների և դրանց կից գործիքների մշակումն իրականացվում է առանձին: Էնդոսկոպը և դրան կից պարագաներն ամբողջությամբ ընկղմում են միջոցի աշխատանքային լուծույթով տարայի մեջ, ապահովելով ամբողջական շփում արտադրատեսակների մակերեսների հետ, և հարկադրաբար լցնում են բոլոր խողովակները օգնող հարմարանքների միջոցով: Խողովակներից օդի հեռացման համար օգտագործում են ներարկիչ (պոմպ): Պահում են ազդեցության անհրաժեշտ ժամանակը և սկսում դրանց մաքրումը: Էնդոսկոպի և դրան կից պարագաների արտաքին մակերեսը մաքրում են լուծույթի մակերեսի վրա գործվածքային (թանգիվե) անձեռոցիկներով, թույլ չտալով ցայտում: Էնդոսկոպի գործիքների և պարագաների մաքրումն իրականացնում են՝ օգտագործելով հատուկ խոզանակներ: Իրականացնում են խողովակների մեխանիկական մաքրում (Էնդոսկոպի արտադրողի առաջարկներին

համապատասխան), օգտագործելով հատուկ խոզանակներ, մետաղալարե մաքրիչներ, որոնք համապատասխանում են խողովակների տրամագծին ու երկարությանը: Միջոցի աշխատանքային լուծույթներով էնդոսկոպի խողովակների լվացման համար օգտագործում են ներարկիչներ կամ այլ հարմարանքներ այդ նպատակների համար, որոնք էնդոսկոպի հետ լինում են նույն լրակազմում: Մեխանիկական մաքրումից հետո էնդոսկոպը և դրան կից պարագաները տեղափոխում են խմելու ջրով տարաների մեջ և լվանում միջոցի մնացորդներից: Էնդոսկոպի, դրա պարագաների լվացումը իրականացնում են հաջորդաբար սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Ախտահանման ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 3-ում և սխեմա 2-ում:

48. Ինվազիվ միջամտություն կատարելուց հետո իրականացվում է վիրաբուժական, միկրովիրաբուժական և ստոմատոլոգիական գործիքների մաքրում և ախտահանում: Ախտահանումից կամ մանրէազերծումից առաջ իրականացվում է գործիքների մանրակրկիտ մաքրում՝ ձեռքային և մեքենայացված եղանակներով: Ամբողջությամբ չմաքրված գործիքը չի ախտահանվի և մանրէազերծվի նույնիսկ երկար ազդեցության պահածամով: Գործիքների մաքրմամբ զբաղվող բուժանձնակազմի վարակման կանխարգելման նպատակով ձեռքային եղանակով նախամանրէազերծման մաքրում իրականացնում են նախնական ախտահանումից հետո կամ ախտահանման հետ համակցված:

49. Կիրառումից անմիջապես հետո, գործիքներն ամբողջությամբ ընկղմվում են միջոցի լուծույթի մեջ, պահում են անհրաժեշտ ազդեցության ժամանակը և դրանից հետո սկսում են նախամանրէազերծում, այդ թվում ախտահանման հետ համակցված: Գործիքների մակերեսների տեսանելի մակերեսները մաքրում են ձեռքային եղանակով: Բարակ խողովակների, անցքերի, արտադրատեսակի դժվարհասանելի մասեր լուծույթի լավ թափանցման համար իրականացվում է մի քանի աշխատանքային շարժում: Թրջումից հետո նույն լուծույթի մեջ իրականացնում են արտադրատեսակի մաքրում օգնող հարմարանքներով: Հաջորդաբար պարզաջրում են արտադրատեսակները՝ սկզբում խմելու ջրով, այնուհետև՝ թորած: Եզրափակիչ ախտահանումից առաջ գործիքները չորացնում են: Բժշկական արտադրատեսակների

նախամանրէագերծման, այդ թվում ախտահանման հետ համակցված ռեժիմները ներկայացված են սույն հրահանգի աղյուսակ 3-ում և սխեմա 1-ում:

50. Արտադրատեսակների նախամանրէագերծման որակը գնահատվում է ազդպիրամային կամ ամիդոպիրինային փորձ դնելով: Վերահսկման ենթակա է միաժամանակ մշակվող նույնանուն արտադրատեսակների 1%-ը (սակայն 3 արտադրատեսակից ոչ պակաս): Արյան մնացորդների հայտնաբերման ժամանակ (դրական փորձ) արտադրատեսակների ամբողջ խումբը, որից վերցվել են արտադրատեսակներ հսկման համար, ենթակա է կրկնակի մշակման մինչև բացասական պատասխան ստանալը:

51. Օրգանական աղտոտվածության ֆիքսումը կանխելու նպատակով գործիքները (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական և այլն) օգտագործելուց հետո ընկղմում են աշխատանքային լուծույթի մեջ՝ չթույլատրելով դրանց չորացումը: Մինչ այդ հեռացնում են տեսանելի աղտոտվածությունը գործվածքից պատրաստված անձեռոցիկների (վիրախճուծների) օգնությամբ: Օգտագործված անձեռոցիկները տեղադրում են առանձին տարայի մեջ և ախտահանում, այնուհետև օգտահանում սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Գործիքներն ընկղմում են այնպես, որ խոռոչները լցվեն աշխատանքային լուծույթով՝ բացառելով օդային խցանների առաջացումը: Քանդվող մասերն ընկղմում են առանձնացված վիճակում, փականային մասեր ունեցող գործիքներն ընկղմվում են բաց վիճակում, մի քանի աշխատանքային շարժում անելով՝ դժվար հասանելի մասեր լուծույթի ներթափանցումն ապահովելու նպատակով: Տարայի և աշխատանքային լուծույթի ծավալը պետք է հնարավորություն ընձեռի գործիքները լիովին ընկղմելու համար, ապահովելով առնվազն 1 սմ աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը գործիքների վրա: Շփման եղանակով ախտահանում թույլատրվում է կիրառել այն բժշկական արտադրատեսակների համար, որոնք անմիջական չեն շփվում պացիենտի հետ և որոնց կառուցվածքային առանձնահատկությունները թույլ չեն տալիս իրականացնել ընկղմման եղանակով մշակում: Ախտահանման պահաժամից հետո արտադրատեսակները հանում են տարայի միջից և լվանում ախտահանիչ միջոցի մնացորդներից հոսող խմելու ջրով:

առնվազն 3 թույլ, լվանալով խողովակները ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով և թույլ չտալով բացթողնված ջուրը լցվի լվացվող արտադրատեսակներով տարայի մեջ:

52. Ատամնաբուժական սարքավորումներ և նյութեր՝ ռոտացիոն, էնդոդոնտիկ և վիրաբուժական գործիքներ (այդ թվում բորեր, դրիլբորեր, հղկման սկավառակներ, սկավառակակալ, ֆրեզներ), ատամնատպվածքներ, ատամնապրոտեզներ: Մշակման մեթոդաբանություն՝ ատամնաբուժական գործիքներն ու նյութերը կիրառումից անմիջապես հետո տեղավորում են միջոցով լցված էմալապատ, պլաստիկ, փակ կափարիչով տարայի մեջ: Տարայի և աշխատանքային լուծույթի ծավալը պետք է հնարավորություն ընձեռի գործիքները լիովին ընկղմելու համար՝ ապահովելով առնվազն 1 սմ աշխատանքային լուծույթի շերտի հաստությունը գործիքների վրա: Ախտահանման պահաժամից հետո (աղյուսակ 3) արտադրատեսակները հանում են տարայի միջից և լվանում ախտահանիչ միջոցի մնացորդներից հոսող խմելու ջրով առնվազն 2 թույլ, թորած ջրով՝ 1 թույլ: Ատամնատպվածքներն ու ատամնապրոտեզները լվանում են յուրաքանչյուր կողմից 30 վայրկյան կամ ընկղմում են ջրով լցված տարայի մեջ, 3 թույլ, այնուհետև չորացնում օդում:

53. Ատամնաբուժական արտածծող համակարգերն ախտահանում են՝ կիրառելով 1 և միջոց, անցկացնելով այն արտածծող համակարգի սարքի միջով 2 թույլ, հետո սպասում են 20 թույլ (այդ ընթացքում արտածծող համակարգը չեն գործածում): Այս գործողությունն իրականացնում են օրական 1-2 անգամ, այդ թվում աշխատանքային հերթափոխից հետո: Արտածծող համակարգերն և մասերը լվանում են խմելու հոսող ջրով:

54. Ատամնաբուժական ծայրադիրները մշակում են միջոցով թրջած երկու անձեռոցիկներով՝ հաջորդաբար՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Ախտահանման պահաժամից հետո, հեռացնում են ախտահանիչի մնացորդները՝ խմելու ջրով թրջած գործվածքային անձեռոցիկներով՝ չսպասելով չորանալուն:

55. Ատամնաբուժական թքամանները լցնում են միջոցով՝ պահելով էքսպոզիցիայի ժամանակը, որն ապահովում է տուբերկուլյոզի միկոբակտերիաների ոչնչացումը (Աղյուսակ 5):

56. Կառուցվածքային բարդ սարքեր ու սարքավորումներ՝ մակերեսների, ինչպես նաև հանգույցների մշակումն իրականացվում է շփման կամ ոռոգման եղանակով՝ սույն հրահանգի աղյուսակ 3-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան:

57. Կուվեզի և նրա պարագաների մակերեսները տարբեր վարակների ժամանակ մանրակրկիտ շփում են միջոցի լուծույթով թրջված գործվածքային կամ ոչ գործվածքային լաթով կամ ոռոգման եղանակով, ձեռքի ցողացրիչով: Ախտահանումից հետո կուվեզի մակերեսները շփում են կրկնակի՝ մանրէազերծ ջրով առատ թրջված մանրէազերծ գործվածքային անձեռոցիկներով, իսկ այնուհետև մանրէազերծ գործվածքով (օրինակ, բարուրաշորով) շփելով չորացնում են: Ախտահանիչ պահաժամից հետո կուվեզներն օդափոխվում են առնվազն 15 րոպե: Կուվեզների քանդվող մասերի դետալների ախտահանումն իրականացվում է ընկղմման եղանակով սույն հրահանգի աղյուսակ 3-ում և սխեմա 1-ում ներկայացված մշակման ռեժիմներին համապատասխան: Կուվեզները մշակելիս հաշվի են առնվում արտադրողի առաջարկները:

58. Ախտորոշիչ, ֆիզիոթերապևտիկ (ներառյալ ստետոսկոպներ, ֆոնենդոսկոպներ, տոնոմետրեր, այդ թվում՝ տոնոմետրերի բազկակապի ներսի կողմը, պուլսօքսիմետրեր, գլյուկոմետրեր, բժշկական ջերմաչափեր և այլն), վարսահարդարման և կոսմետոլոգիական սարքավորումների տվիչներն ու այլ տարրերը, որոնք միջանկյալ մակարդակի ախտահանման կարիք ունեն տարբեր վարակների ժամանակ մանրակրկիտ շփում են միջոցով թրջված գործվածքային և ոչ գործվածքային անձեռոցիկներով՝ սույն հրահանգի աղյուսակ 4-ում ներկայացված ռեժիմներին համապատասխան: Չաղտոտված սարքավորումները մշակում են մեկ անգամ: Կենսաբանական հեղուկներով աղտոտված սարքավորումները մշակում են երկու փուլով՝ պահելով անհրաժեշտ ազդեցության ժամանակը և առաջին փուլից հետո հեռացնելով կենսաբանական հեղուկին խառնված ախտահանիչի մնացորդները խոնավ անձեռոցիկներով կամ մեկանգամյա օգտագործման սրբիչներով: Ախտահանման ավարտից հետո մակերեսը սրբում են թանգիվե մանրէազերծ անձեռոցիկներով՝ չսպասելով ախտահանիչի չորացմանը: Ախտորոշիչ սարքավորումների տվիչները մշակում են յուրաքանչյուր պացիենտից հետո:

Բժշկական և այլ կազմակերպություններում մակերեսների ախտահանման
ռեժիմները

միջոցի լուծույթներով տարբեր էթիոլոգիայի վարակների համար

Ախտահանման օբյեկտ	Վարակի էթիոլոգիան		Մշակման եղանակը
	Մանրէային (տուբերկուլոզից բացի), վիրուսային, սնկային (կանդիդոզներ)	Սնկային (դերմատոֆիտիա ներ, բորբոսասունկ), տուբերկուլոզ ¹	
	Ազդեցության ժամանակը, րոպե		
Սենքերի և ավտոտրանսպորտի մակերեսներ, կոշտ կահույք, պատի և հատակի ծածկույթ	3	5	Շփում, ոռոգում
Կենսաբանական հեղուկներով աղտոտված սենքերի և ավտոտրանսպորտի մակերեսներ (մեծ և փոքր թափվածք)	5	10	Շփում, ոռոգում Նշված է կրկնակի մշակման դեպքում գումարային ազդեցության ժամանակը:
Կենսաբանական հեղուկների թափվածքներ պարունակող մակերեսներ	5	10	Երկփուլ մշակում 23 կետում նկարագրված մեթոդաբանությամբ: 1 փուլ՝ 10 րոպե պահաժամ: Հետո մշակումն իրականացնում են

			համապատասխան ռեժիմով:
Փափուկ մակերեսներ, այդ թվում գորգեր և հատակի այլ փափուկ ծածկ, փափուկ կահույք	3	5	Շփում՝ մշակում խոզանակի օգնությամբ
Սանիտարատեխնիկական սարքավորումներ՝ տեսանելի չաղտոտված:	3	5	Շփում, ոռոգում
Սանիտարատեխնիկական սարքավորումներ՝ աղտոտված կենսաբանական հեղուկներով:	5	10	Շփում, ոռոգում
Օժանդակ պարագաներ, էսթետիկ մաքուր հավաքման պարագաներ	3	5	Շփում, ընկղմում
Օժանդակ պարագաներ, տեսանելի աղտոտված հավաքման պարագաներ	5	10	Շփում, ընկղմում

Նշում՝ Թեսթավորվել է *Mycobacterium terrae*-յի վրա:

Աղյուսակ 2

Օդի, օդորակման և օդափոխման համակարգերի ախտահանման ռեժիմները

Ախտահանման օբյեկտ		Ազդեցության պահաժամ, րոպե	Մշակման եղանակ
Կենտրոնական և կենցաղային օդորակիչների և համընդհանուր օդափոխության սեկցիաներ, օդընդունիչներ և օդաբաշխիչներ		10	Շփում կամ ոռոգում
Օդի զտիչներ (ֆիլտրներ) ¹		10	Առատ ոռոգում կամ ընկղմում
Ռադիատորի վանդակաճաղ, ծայրադիրներ, կոնդենսատի կուտակիչներ		10	Շփում
Օդատարներ		10	Ոռոգում
Սենքերի օդի մշակում	Մանրէային (բացառությամբ	10	

	տուբերկուլյոզի) վարակների ժամանակ		Փոշեցրում աէրոզոլների գեներատորների օգնությամբ
	Վիրուսային վարակների ժամանակ	15	
	Մնկային վարակների ժամանակ	15	
	Տուբերկուլյոզի ժամանակ	30	

Նշում՝* Ռեժիմները կիրառելի են նաև մանրէային ֆիլտրերի մշակման համար:

¹ Թեսթավորվել է Mycobacterium terrae-յի վրա:

Աղյուսակ 3

Բժշկական արտադրատեսակների ախտահանման հետ չհամակցված
նախամանրէազերծման ռեժիմներ միջոցի լուծույթով

Ախտահանման օբյեկտ	Ախտահանման օբյեկտի նյութը, օբյեկտի աղտոտվածության չափը	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման եղանակը
Բժշկական արտադրատեսակներ 1. Վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական, կոսմետոլոգիական գործիքներ 2. Բարդ կառուցվածքային և սարքերի սարքավորումների տարրեր 3. Լաբորատոր սպասք և այլ պարագաներ	1. Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ) առարկաներ 2. Պարզ կառուցվածքի, խոռոչներ չունեցող, ոչ ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մասեր:	5	
	1. Ծակոտկեն նյութից (ռետին և այլ պոլիմերային նյութեր) առարկաներ, որոնց որակյալ մաքրումը	10	

	հնարավոր չէ կամ կասկածելի է: 2. Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մասեր:		
Ճկուն էնդոսկոպներ	Բարդ կառուցվածքային արտադրատեսակներ ջերմամանկայուն նյութերից,	5	
Կոշտ էնդոսկոպներ	որոնք ունեն խոռոչներ, խողովակներ, փականային մասեր:	5	

Աղյուսակ 4

Բժշկական արտադրատեսակների¹ ախտահանման և մանրէազերծման ռեժիմները
միջոցի լուծույթով տարբեր վարակների դեպքում

Ախտահանման օբյեկտ	Վարակի էթիոլոգիան			Մշակման եղանակ
	Մանրէային (տուբեր-կուլոզից բացի), սնկային (կանդիդոզ)	Վիրուսային	Սնկային (դերմատոֆիտիա տուբերկուլոզ ¹)	
	Ազդեցության ժամանակը, րոպե			
Բարդ կառուցվածքի սարքերի, սարքավորումների մակերեսներ, ինչպես նաև հանգույցներ:				Շփում, ոռոգում
Կուվեզներ և մանկական մահճակալներ				Շփում, ոռոգում
Ախտորոշիչ, կոսմետոլոգիական,				Շփում, ոռոգում

վարսահարդարման սարքավորումների տարրեր և տվիչներ				
Էնդոսկոպիկ սարքավորում				Շփում
Ատամնաբուժական նյութ				Ընկղմում
Վիրաբուժական, միկրովիրաբուժական, գինեկոլոգիական, ստոմատոլոգիական, կոսմետոլոգիական գործիքներ: Բարդ կառուցվածքային սարքերի տարրեր և քանդվող մասեր: Լաբորատոր սպասք և լաբորատոր այլ պարագաներ				
1. Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից (մետաղ, ապակի, պոլիմերային նյութեր, պլաստիկ) առարկաներ 2. Պարզ կառուցվածքի, առանց խոռոչների, ծակոտկեն մակերեսների, ինչպես նաև փականային մասերի:				Ընկղմում
1. Ծակոտկեն նյութից (ռետին և այլ պոլիմերային նյութեր) առարկաներ, որոնց որակյալ մաքրումը հնարավոր չէ կամ կասկածելի է: 2. Բարդ կառուցվածքի, խոռոչներով ծակոտկեն մակերեսներ, ինչպես նաև փականային մասեր:				Ընկղմում

Նշում. * – Թեստավորված *Mycobacterium terrae*-ի վրա

Բժշկական արտադրատեսակների՝ վիրաբուժական, միկրովիրաբուժական,
ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքների, ատամնաբուժական նյութի,

կառուցվածքային բարդ սարքերի և սարքավորումների ախտահանում՝ համակցված նախամանրէազերծման հետ միջոցի լուծույթներով

Սխեմա 1

Ձեռքային եղանակ



ԱՌԱՋԻՆ ՓՈԽԼ

Ախտահանում

Բժշկական արտադրատեսակների ընկղմում աշխատանքային լուծույթով տարայի մեջ դրանց ամբողջական ընկղմմամբ մշակման ձեռքային եղանակի ժամանակ և դրանով պոմպի կամ էլեկտրաարտաձծիչի միջոցով խոռոչները և խողովակները լցնելով

Հարթ, ոչ ծակոտկեն նյութերից պարզ կառուցվածքի առարկաներ		Ծակոտկեն նյութից, բարդ կառուցվածքի, խոռոչներով, խողովակներով, ինչպես նաև փականային մասերով առարկաներ	
Վարակի էթիոլոգիան			
Մանրէային (տուբերկուլոզից բացի), սնկային (կանդիդոզ)	Վիրուսային, սնկային (դերմատոֆիտիա, բորբոսասնկեր), Տուբերկուլոզ ¹	Մանրէային (տուբերկուլոզից բացի), սնկային (կանդիդոզ)	Վիրուսային, սնկային (դերմատոֆիտիա, բորբոսասնկեր), Տուբերկուլոզ ¹
Ազդեցության ժամանակը, րոպե			
5	10	10	20

Նշում.¹ Թեստավորված է *Mycobacterium terrae*-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԽԼ

Նախամանրէազերծում

Պահպանում լուծույթում, որի մեջ ախտահանվել է և մանրակրկիտ մաքրում հատուկ հարմարանքներով՝ մինչև աղտոտվածության ամբողջությամբ հեռացումը



5 րոպե



10 րոպե



ԵՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/ընկղմում, խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՐՈՐԴ ՓՈՒԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածիչով), առնվազն 3 րոպե, մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՓՈՒԼ

Ցանկացած հասանելի մեթոդով չորացում (բժշկական արտադրատեսակից ամբողջությամբ ջրի հեռացում):

Ճկուն և կոշտ էնդոսկոպների, դրանց կից պարագաների և գործիքների ախտահանում՝ նախամանրէազերծման/եզրափակիչ մաքրման հետ համակցված

Սխեմա 2

ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼ



Ախտահանում

Էնդոսկոպների (կամ ամբողջությամբ չընկղմվող էնդոսկոպների համար դրանց ընկղմման թույլատրվող մասերի), գործիքների և դրանց կից պարագաների թրջում միջոցի աշխատանքային լուծույթի մեջ դրանք ամբողջությամբ ընկղմելով և խոռոչներն ու խողովակները լուծույթով լցնելով

Ճկուն և կոշտ էնդոսկոպներ		Էնդոսկոպի գործիքներ	
Վարակի էթիոլոգիան			
Մանրէային (տուբերկուլոզից բացի), սնկային (կանդիդոզ)	Վիրուսային, սնկային (դերմատոֆիտիա, բորբոսասնկեր), Տուբերկուլոզ ¹	Մանրէային (տուբերկուլոզից բացի), սնկային (կանդիդոզ)	Վիրուսային, սնկային (դերմատոֆիտիա, բորբոսասնկեր), Տուբերկուլոզ ¹
Ազդեցության ժամանակը, րոպե			
5	10	10	20

Նշում. ¹ Թեստավորված է Mycobacterium terrae-ի վրա:



ԵՐԿՐՈՐԴ ՓՈԻԼ

Նախամանրէազերծում

Յուրաքանչյուր արտադրատեսակի լվացում նույն լուծույթի մեջ, որտեղ
իրականացվել է թրջումը, լուծույթի առնվազն 18°C ջերմաստիճանում

Ճկուն էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը, րոպե	Կոշտ էնդոսկոպի բաժիններ	Մշակման ժամանակը, րոպե
Գործիքային խողովակի մաքրում են գործիքային խողովակի մաքրման խոզանակով	2	Յուրաքանչյուր դետալ լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	2
Ներքին խողովակները լվանում են ներարկիչով կամ էլեկտրաարտաձիչով	3	Խողովակները լվանում են ներարկիչով	2
Արտաքին մակերեսը լվանում են գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով	1		
Էնդոսկոպներին կից գործիքների մակերեսներ			
Արտաքին մակերեսը լվանում են խոզանակով կամ գործվածքային (թանգիվե) անձեռոցիկով		Մշակման ժամանակը՝ 2 րոպե	
Ներքին խողովակները մեխանիկորեն մաքրում են խոզանակներով և մետաղալարային մաքրիչներով		Մշակման ժամանակը՝ 1,5 րոպե	
Ներքին խողովակները միջոցի լուծույթով կրկնակի լվանում են հատուկ հարմարանքներով			



ԵՐՐՈՐԴ ՓՈԽԼ

Խմելու ջրով արտադրատեսակի լվացում/լնկղմում, խոռոչների և խողովակների լվացում ներարկիչի կամ էլեկտրաարտածծիչի օգնությամբ մինչ աշխատանքային լուծույթի լրիվ վերացումը, 3 րոպեի ընթացքում:



ՉՈՐՈՐԴ ՓՈԽԼ

Պարզաջրում թորած ջրով (խողովակները լվացվում են ներարկիչով կամ էլեկտրաարտածծիչով), մինչև խմելու ջրի մնացորդները վերանան:

Աղյուսակ 5

Բժշկական և այլ կազմակերպություններում բժշկական թափոնների ախտահանման ռեժիմները ախտահանիչ միջոցով՝ տարբեր վարակների ժամանակ

Ախտահանման օբյեկտ	Վարակի էթիոլոգիան			
	Մանրէային (տուբերկուլոզից բացի), սնկային (կանդիդոզ) ¹	Վիրուսային	Սնկային (դերմատոֆիտիա, բորբոսասնկեր) տուբերկուլոզ ^{2,3}	Մշակման եղանակը
	Ազդեցության ժամանակը, րոպե			
Կենսաբանական հեղուկներով աղտոտված մեկանգամյա օգտագործման առարկաներ ³				
Մետաղից, ապակուց, պլաստմասից, ռետինից պատրաստված մեկանգամյա օգտագործման բժշկական արտադրատեսակներ	10	20	20	Ընկղմում

Վիրակապական նյութեր, մեկանգամյա օգտագործման սպիտակեղեն, անձնակազմի արտահագուստ և գործվածքից պատրաստված այլ արտադրատեսակներ, ռետին ձեռնոցներ	10	20	20	Թրջում
Կենսաբանական հեղուկներ				
Հեղուկ թափոններ, լվացման ջրեր (ներառյալ էնդոսկոպիկ), միկրոկենսաբանական լաբորատորիաների թափոններ (նմուշներ, պատվաստանյութ, շտամներ, վիրուսային նյութ)	20	20	30	Խառնել միջոցի հետ 1:2 հարաբերութ յամբ
Արյուն և արյունով խառնված կենսաբանական հեղուկներ, շիճուկ	20	30	30	Խառնել միջոցի հետ 1:2 հարաբերութ յամբ
Մեզ, կոկորդի ողողման հեղուկ	10	10	20	Խառնել միջոցի հետ 1:1 հարաբերու թյամբ
Հիվանդի արտաթորանքներ՝ խորխ, կղանք, ողնուղեղային հեղուկ, էնդոտրախեալ ասպիրատ, փսխման զանգված	20	20	30	Խառնել միջոցի հետ 1:2 հարաբերու թյամբ

Սննդի մնացորդներ	10	10	20	Խառնել միջոցի հետ 1:1 հարաբերու թյամբ
Բժշկական թափոնների հավաքման տարաներ, սարքավորումներ				
A, B, B ⁵ դասի թափոնների հավաքման տարաներ	5	5	10	Շփում, ռոռզում
Հիվանդի արտաթորանքների հավաքման տարաներ, լաբորատոր սպասք և մակերեսներ, որտեղ հավաքվել է կենսաբանական նյութը	-	-	20	Ընկղմում
Խորիխից մաքրված թքամաններ	-	-	20	Լցնում Ընկղմում
Բժշկական թափոնների հավաքման տարաներ, աղբահավաք սարքավորումներ	5	5	10	Շփում, ռոռզում

Նշումներ ¹- B դասի թափոնների համար

²- B դասի թափոնների համար

³- Կենսաբանական հեղուկների տեսակները ներկայացված են սանիտարական կանոններում

⁴- Թեսթավորված է *Mycobacterium terrae*-յի վրա

⁵ A և B դասի թափոնների հավաքման տարրաներն ախտահանվում են մանրէային և վիրուսային վարակների մշակման ռեժիմներով, B դասի թափոնների հավաքման տարրաները՝ տուբերկուլոզի ռեժիմով:

Աղյուսակ 6

Ներհիվանդանոցային վարակների¹ հարուցիչներով, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) դեղորայքակայուն շտամներով բաղարկված տարբեր օբյեկտների ախտահանման ռեժիմները² միջոցով

Ախտահանման օբյեկտ	Ազդեցության ժամանակը, րոպե	Մշակման եղանակը
Սենքերի մակերեսներ, կոշտ կահույք, սարքեր, սարքավորումներ (այդ թվում հանգույցներ, տվիչներ և հարմարանքներ) առանց օրգանական աղտոտվածության, սանիտարական տրանսպորտ	10	Շփում կամ ոռոգում
Հիվանդի խնամքի պարագաներ, օժանդակ պարագաներ	10	Շփում կամ ոռոգում
Տեսանելի աղտոտվածություն չունեցող սանիտարատեխնիկական սարքավորումներ	5	Շփում կամ ոռոգում
Կենսաբանական հեղուկներով աղտոտված սանիտարատեխնիկական սարքավորումներ	10	Շփում կամ ոռոգում
Տեսանելի աղտոտվածություն ունեցող մաքրման պարագաներ	10	Թրջում
Բժշկական արտադրատեսակներ (վիրաբուժական, միկրովիրաբուժական, ատամնաբուժական, գինեկոլոգիական գործիքներ): Ատամնաբուժական նյութեր: Կառուցվածքային բարդ սարքերի քանդվող մասերի տարրեր:	20	Ընկղմում
Կուվեզներ և մանկական մահճակալներ	10	Թրջում կամ ընկղմում

Նշումներ ¹- Տվյալ ռեժիմներն օգտագործվում են ստացիոնարում (բաժանմունքում) ներհիվանդանոցային վարակների հարուցիչների հայտնաբերման դեպքում

²-թեստավորված է օգտագործելով *Klebsiella pneumoniae* 22, *Pseudomonas aeruginosa*, *Acinetobacter baumannii* 221, *Staphylococcus haemolyticus* 39.

³- Գրամբացասական մանրէներ *Klebsiella pneumoniae* 22, *Pseudomonas aeruginosa*, *Acinetobacter baumannii* 221, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները

⁴-Գրամդրական մանրէներ *Staphylococcus haemolyticus* 39, ներառյալ ժամանակակից հոսպիտալային (կլինիկական) շտամները:

4. ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

59. Միջոցով աշխատել չի թույլատրվում 18 տարեկանից ցածր, ալերգիկ հիվանդություններ ունեցող անձանց, հղի կանանց և կերակրող մայրերին:

60. Միջոցով աշխատում են՝ օգտագործելով հետևյալ անհատական պաշտպանության միջոցները (ԱՊՄ).

1) Մաշկի պաշտպանության միջոցներ՝

ա. պաշտպանիչ խալաթ կամ համազգեստ, քիմիապես կայուն ձեռնոցներ կաուչուկից, լատեքսից, պոլիվինիլքլորիդից և այլն, որոնք ապահովում են համապատասխան պաշտպանություն հիմնային լվացող նյութերից, ինչպես նաև ախտածին մանրէներից,

բ. ոտքերի պաշտպանության միջոցներ (մեկանգամյա կիրառության միջոցներ կամ ռետինե ճոքակոշիկներ):

2) Աչքերի պաշտպանության միջոցներ՝

ա. ակնոց կամ դիմակ, որոնք ապահովում են պաշտպանություն քիմիական ախտահանիչների ցայտումից, ինչպես նաև ախտածին մանրէներ պարունակող հեղուկների ցայտումից,

բ. վահանակներ, էկրաններ:

3) Շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ՝

ա. քիմիական ախտահանիչների գոլորշիներից, ինչպես նաև ախտածին մանրէներից (օդակաթիլային ճանապարհով փոխանցվող օրգանիզմների առաջացման հնարավորության դեպքում) պաշտպանություն ապահովող դիմակներ,

բ. «В» մակնիշի պատրոնով РПГ-67 կամ РУ-60М տեսակի ունիվերսալ շնչադիմակներ:

61. Շփման, ընկղմման և թրջման եղանակով, այսինքն, արյան և կենսաբանական հեղուկների փոքր քանակների թափման դեպքում օբյեկտների ախտահանումն իրականացվում է մարդկանց ներկայությամբ, առանց շնչառական օրգանների պաշտպանության միջոցների: Ախտահանում իրականացնող անձնակազմի համար պարտադիր է մաշկի անհատական պաշտպանության միջոցների (պաշտպանիչ խալաթ, ձեռնոց) օգտագործումը:

62. Կենսաբանական հեղուկներով թափվածք պարունակող մակերեսներն ախտահանում են անհատական պաշտպանության միջոցների ամբողջ լրակազմ կիրառելով:

63. Միջոցով աշխատանքներն ավարտելուց հետո ձեռքերն ու դեմքը լվանում են օճառով: Ոռոգման եղանակով օբյեկտների մշակումից հետո սենքն օդափոխում են:

64. Միջոցով աշխատելիս խուսափում են բաց վերքերի, լորձաթաղանթների, աչքերի մեջ լցվելուց:

65. Միջոցով աշխատելիս պահպանում են անձնական հիգիենայի կանոնները: Չեն ծխում, չեն խմում, սնունդ չեն ընդունում:

66. Միջոցը չեն խառնում այլ ախտահանիչների հետ:

5. ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

67. Միջոցը քիչ վտանգավոր է, սակայն ոռոգման եղանակով աշխատանքի ժամանակ նախազգուշական միջոցառումները չպահպանելու դեպքում հնարավոր է թունավորում, որն արտահայտվում է վերին շնչառական օրգանների (չորություն, հազ, կոկորդում քերծվածության զգացում), աչքերի (արցունքահոսություն, ծակծկոց) և մաշկի գրգռումով (հիպերեմիա, այտուցվածություն):

68. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) աչքերի մեջ լցվելիս՝ աչքերն անմիջապես լվանում են հոսող ջրի շիթով 10-15 րոպե կամ 2 % սոդայի լուծույթով, հետո կաթեցնում նատրիումի սուլֆացիլի 30 %-ոց լուծույթ: Կոնտակտային լինզաներ կրողները մշակումից 5 րոպե առաջ հանում են, այնուհետև լվանում աչքերը: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

69. Միջոցի աշխատանքային լուծույթի (փոշու) մաշկի կամ հագուստի վրա պատահական լցվելու դեպքում անհապաղ հանում են աղտոտված հագուստը, լվանում մեծ քանակությամբ ջրով 10-15 րոպե:

70. Շնչառական օրգանների գրգռման ժամանակ դադարեցնում են աշխատանքը միջոցով, տուժածին հանում մաքուր օդի, բերանը ողողում են ջրով, այնուհետև նշանակում նատրիումի հիդրոկարբոնատի 2%-ոց լուծույթով տաք, խոնավ

ինհալյացիաներ կամ ողողումներ: Քթային շնչառության խանգարման դեպքում օգտագործում են էֆեդրինի 2%-ոց լուծույթ, կոկորդի ախտահարման դեպքում՝ լուծության ռեժիմ, սողայով տաք կաթ կամ հանքային ջուր: Անհրաժեշտության դեպքում դիմում են բժշկի:

71. Միջոցը ստամոքսի մեջ հայտնվելու ժամանակ, եթե տուժածը գիտակցություն ունի, խմացնում են 2-3 բաժակ ջուր, իսկ անգիտակից վիճակում գտնվող տուժածին փսխում առաջացնել և ստամոքսի լվացում անել խորհուրդ չի տրվում: Փսխման ժամանակ կամ ջուր խմելիս հեղուկի անցումը թոքեր կարող է առաջացնել թոքերի լուրջ ախտահարում կամ մահ: Եթե ինքնաբուխ փսխում է, ապա գլուխը կախում են ցած, որքան հնարավոր է, որ կանխեն հեղուկի անցումը թոքեր: Ստամոքսի մեջ միջոցը լցվելիս՝ անհապաղ դիմում են բժշկի:

6. ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄ, ՊԱՀՈՒՄ

72. Միջոցը տեղափոխվում է վերգետնյա տրանսպորտի բոլոր տեսակներով արտադրողի փաթեթավորմամբ՝ տրանսպորտի տվյալ տեսակի համար գործող բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

73. Միջոցը պահում են արտադրողի չբացված փաթեթավորմամբ -10°C -ից մինչև $+30^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում, խոնավությունից և արևի ուղիղ ճառագայթներից պաշտպանված, ջերմության աղբյուրներից, դյուրավառ հեղուկներից հեռու տեղում, դեղամիջոցներից առանձին, կենդանիներին և օտար մարդկանց անհասանելի տեղում:

74. Միջոցը թողարկվում է 0.1 լ-ից մինչև 1 լ ծավալով պոլիմերային տարաներով՝ ցողացրման համար ծայրադիրներով կամ սերտ պատվող կափարիչներով, 5 լ-ից մինչև 200 լ ծավալով պատվող կափարիչներով տարաներով, 10×10 սմ-ից մինչև 20×20 սմ չափսերի ոչ գործվածքային նյութից անձեռոցիկի վրա 3-ից մինչև 10 գ միջոց պարունակող հերմետիկ բազմաշերտ փաթեթավորմամբ, մեկ անձեռոցիկին 3-10 գ միջոց հաշվարկով անձեռոցիկների (50-200 հատ) ծակոտկեն գլանափաթեթի տեսքով՝ պոլիմերային բանկաների մեջ, որոնք ապահովում են հերմետիկությունը և ունեն մեկ անձեռոցիկ քաշելու համար կափարիչ:

7. ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

75. Ըստ որակի ցուցանիշների, միջոցը հսկվում է սույն հրահանգի աղյուսակ 7-ում ներկայացված ցուցանիշներին և նորմաներին համապատասխան:

Աղյուսակ 7.

Միջոցի որակի ցուցանիշներ

	Ցուցանիշի անվանում	Նորմա
1	Արտաքին տեսք	Անգույնից մինչև դեղին գույնի թափանցիկ թափանցիկ հեղուկ:
2	Հոտ	Բուրավետիչի հոտ
3	Խտությունը 20°C ջերմաստիճանում, գ/սմ ³	1,000±0,050
4	Միջոցի ջրային լուծույթի ջրածնային իոնների ակտիվության ցուցանիշը (pH)	10,0±1,0
5	ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (ալկիլդիմերիլբենզիլամոնիումի քլորիդ, դոդեցիլդիմերիլամոնիումի քլորիդ), գումարային, %	0,3 ±0,03
6	Պոլիդեքսամերիլգուանիդինի հիդրոքլորիդի զանգվածային բաժինը, %	0,20 ±0,02
7	N,N-բիս (3-ամինոպրոպիլ դոդեցիլամինի) զանգվածային բաժինը, %	0,05 ±0,01

Աղյուսակ 8.

Միջոցի որակի ցուցանիշներ

(արտադրության ձևը՝ միջոցով տոգորված անձեռոցիկ)

	Ցուցանիշի անվանում	Նորմա
1	Արտաքին տեսք	Ոչ գործվածքային նյութից, միջոցով տոգորված խոնավ սպիտակ անձեռոցիկ:

2	Հոտ	Բուրավետիչի հոտ
3	Ներծծված լուծույթի զանգվածը անձեռոցիկում, գ	$10,0 \pm 1,0$ $5,0 \pm 0,5$
4	ՉԱՄ-ի զանգվածային բաժինը (ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ, դոդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ), գումարային, %	$0,3 \pm 0,03$
5	Պոլիդեքսամեթիլգուանիդինի հիդրոքլորիդի զանգվածային բաժինը, %	$0,15 \pm 0,015$
6	N,N-բիս (3-ամինոպրոպիլ դոդեցիլամինի) զանգվածային բաժինը, %	$0,05 \pm 0,01$

76. Արտաքին տեսքը և գույնը որոշվում է ակնադիտորեն, հոտը որոշում են օրգանոլեպտիկ եղանակով: 30-32 մմ տրամագծով անգույն ապակուց փորձանոթի մեջ մինչև կեսը լցնում են միջոցի լուծույթ և դիտում են արտացոլված կամ անցողիկ լույսի տակ:

77. Խտությունը 20°C ջերմաստիճանում չափվում է ԳՕՍՏ 18995.1-ին համապատասխան:

78. Անձեռոցիկում ներծծված լուծույթի զանգվածի որոշում՝

Ա. Սարքավորումներ, նյութեր, ռեակտիվներ՝ բյուքս CB 34/12՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

Բ. Ընդհանուր նշանակության լաբորատոր կշեռք՝ 0.01գ չգերազանցող սխալանքով

79. Փորձարկման իրականացում՝ ունելիով փաթեթից հանում են անձեռոցիկը՝ բացելուց անմիջապես հետո և տեղադրում են մինչև մշտական զանգված չորացված բյուքսի մեջ, կշռում են անձեռոցիկով բյուքսը, անձեռոցիկը օդում չորացնում են մինչև մշտական զանգված և կշռում նույն բյուքսի մեջ: Կշռման ճշգրտությունը մինչև 0,01 գ:

Տոգորված լուծույթի զանգվածը (M) որոշում են բանաձևով՝ $M = m_1 - m_2$, որտեղ

M – տոգորված լուծույթի զանգվածն է, գ,

m_1 – անձեռոցիկով (մինչև չորացնելը) բյուկսի զանգվածը, գ,

m_2 – անձեռոցիկով (չորացնելուց հետո) բյուկսի զանգվածը, գ:

Որպես որոշման արդյունք ընդունում են 5 անձեռոցիկների փորձարկման միջին արժեքը, որոնց միջև հարաբերական տարբերությունները առավել տարբերվող արդյունքների միջև չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 2%:

80. Խտությունը 20°C ջերմաստիճանում որոշում են համաձայն ԳՕՍՏ 18995.1.

81. Միջոցի pH –ի որոշում՝

1) Սարքավորումներ, ռեակտիվներ և նյութեր՝ ցանկացած մակնիշի pH-մետր՝ 0.1 չգերազանցող սխալանքով, 50 սմ³ տարողությամբ ապակե բաժակ՝ ըստ ԳՕՍՏ 25336-82:

2) Փորձարկման իրականացում՝ բաժակի մեջ լցնում են 30-40 սմ³ ծավալով միջոց և pH-մետրով չափում են pH՝ համաձայն հրահանգի:

82. ՉԱՄ (դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ) գումարային զանգվածային բաժնի որոշում: Սարքավորումներ, ռեակտիվներ, նյութեր.

1) ընդհանուր նշանակության 2-րդ դասի լաբորատոր կշեռք ըստ ԳՕՍՏ 53228-2008՝ 200 գ կշռման առավելագույն սահմանով,

2) բյուրետ 1-3-2-25-0,1,

3) փորձանոթ Кн 1-250-29/32 ТХС տիպի՝ ըստ ԳՕՍՏ 25336՝ հղկված խցանով,

4) Ծծմբական թթու ըստ ԳՕՍՏ 4204,

5) Քլորոֆորմ ըստ ԳՕՍՏ 20015,

6) Նատրիումի դոդեցիլսուլֆատ ըստ ТУ 6-09-64, 0,004Ն ջրային լուծույթ,

7) Նատրիումի սուլֆատ տասջրանոց, մ.հ.հ. ըստ ԳՕՍՏ 4171,

8) Մեթիլենային երկնագույն ըստ ՏՈՒ 6-09-29,

9) ցետիլպիրիդինիումի քլորիդ 1-ջրային՝ հիմնական նյութի 99% ոչ պակաս պարունակությամբ «Մերկ» (Գերմանիա) ընկերության արտադրության կամ նմանատիպ որակավորման ռեակտիվ՝ ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի, 0,004Ն ջրային լուծույթ,

10) թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709:

83. Հետազոտության նախապատրաստում: Ինդիկատորի, ցետիլպիրիդինիումի քլորիդի և նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթների պատրաստում.

- 1) Ինդիկատորի լուծույթի պատրաստման համար 1 դմ³ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ լցնում են 30 սմ³ մեթիլեն կապույտի 0,1% ջրային լուծույթ, 7,0 սմ³ խտացրած ծծմբական թթու, 110 գ նատրիումի սուլֆատ տասջրանոց և ծավալը թորած ջրով հասցնում են մինչև 1 դմ³:
 - 2) ցետիլպիրիդինիումի քլորիդի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված ցետիլպիրիդինիումի քլորիդի 1-ջրային 0,143 գ կշռուկի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ,
 - 3) նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթը պատրաստում են 100 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ թորած ջրում նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,116 գ կշռվածքի լուծմամբ և ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ:
84. Նատրիումի դոդեցիլսուլֆատի 0,004Ն լուծույթի շտկիչ գործակցի որոշում: 250 սմ³ տարողությամբ փորձանոթի մեջ 10 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթին ավելացնում են 40 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Առաջացած երկֆազ համակարգը տիտրում են ցետիլպիրիդինիումի քլորիդի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթի ինտենսիվ թափահարմամբ, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:
85. Հետազոտության իրականացում: 100 սմ³ տարողությամբ չափիչ փորձանոթի մեջ մինչև 0,0002 գ ճշգրտությամբ վերցված հետազոտվող նմուշի 15,0-ից մինչև 17,0 գ կշռվածքը լուծում են թորած ջրում՝ ջրի ծավալը հասցնելով մինչև նիշ: 250 սմ³ տարողությամբ կոնաձև փորձանոթի մեջ լցնում են 5 սմ³ նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթ, ավելացնում են 45 սմ³ թորած ջուր, 20 սմ³ ինդիկատորի լուծույթ և 15 սմ³ քլորոֆորմ: Թափահարման արդյունքում առաջանում է երկֆազ համակարգ՝ կապույտ գույտ ներկված ներքևի քլորոֆորմային շերտով: Այն տիտրում են միջոցի պատրաստի լուծույթով՝ փակ կափարիչով փորձանոթն ինտենսիվ թափահարելով, մինչև ներքևի քլորոֆորմային շերտի գունազրկումը: Տիտրումն իրականացնում են ցերեկային լուսավորության ներքո: Երկֆազ համակարգի գույնը որոշում են անցողիկ լույսի տակ:

86. Արդյունքների մշակում: ՉԱՄ զանգվածային բաժինը (X) տոկոսներով որոշում են հետևյալ բանաձևով.

$$X = \frac{0.00143 \cdot V \cdot K \cdot 100}{V_1 \cdot m} \cdot 100, \text{ որտեղ}$$

0.00143 – ՉԱՄ-ի (դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ)

միջին զանգված, որը համապատասխանում է ուղիղ $C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն)

նատրիումի դոդեցիլսուլֆատի լուծույթի 1 սմ³ -ին, գ,

$V = C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող

լուծույթի ծավալ, 5 սմ³,

$K = C(C_{12}H_{25}SO_4Na)=0.004$ մոլ/դմ³ (0.004Ն) խտությամբ նատրիումի դոդեցիլսուլֆատի տիտրվող լուծույթի շտկիչ գործակից,

100 – հետազոտվող նմուշի նոսրացման գործակից,

V_1 – միջոցի լուծույթի ծավալ, որը ծախսվել է տիտրման ժամանակ, սմ³,

m – հետազոտվող նմուշի զանգված, գ:

87. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերություն չի գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4.0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում:

88. Պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի զանգվածային բաժնի որոշում:

1) Սարքավորումներ, նյութեր և ռեակտիվներ.

ա. Ցանկացած մակնիշի լաբորատոր կշեռք, որն ապահովում է զանգվածի որոշում 0,0002 գ չգերազանցող սխալանքով:

բ. Սֆեկտրոֆոտոմետր՝ տեսանելի մասի սպեկտրի չափման համար

գ. Չափիչ կոլբաներ 2-100-2, 2-200-2 ըստ ԳՕՍՏ 1770-90

դ. Կաթոցիկներ 4-1-1, 6-1-10 ըստ ԳՕՍՏ 20292-74

ե. Պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի ստանդարտ նմուշ՝ հիմնական նյութի հայտնի պարունակությամբ՝ աշխատանքային ստանդարտ նմուշ հիմնական նյութի 99,0% պարունակությամբ

զ. Էոզին H (ինդիկատոր) ըստ TY 6-09-183-73

է. Թորած ջուր ըստ ԳՕՍՏ 6709-72:

89. Հետազոտության նախապատրաստում՝ ներկանյութի (Էոզին H) 0,05% զանգվածային բաժնով լուծույթի նախապատրաստում: Ներկանյութի լուծույթը պատրաստում են 50 մգ Էոզինը 100 սմ³ թորած ջրի մեջ լուծելով, կիրառում են թարմ պատրաստված լուծույթ:

90. Պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի ստանդարտ նմուշի 0,002 գ կշռուկը տեղավորում են 100 մլ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, լուծում 40-50 մլ ջրի մեջ, լուծույթի ծավալը ջրի միջոցով հասցնում են մինչև նիշը և խառնում: Ստացված 1 մլ լուծույթը տեղավորում են 200 մլ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, հասցնում լուծույթի ծավալը մինչև նիշը և խառնում, կիրառում են թարմ պատրաստված լուծույթ:

ա. Հետազոտության իրականացում՝ միջոցի 1 գ կշռուկը տեղավորում են 100 մլ տարողությամբ

չափիչ կոլբայի մեջ, լուծույթի ծավալը ջրի միջոցով հասցնում են մինչև նիշը և խառնում:

Ստացված 1 մլ լուծույթը տեղավորում են 200 մլ տարողությամբ չափիչ կոլբայի մեջ, հասցնում

լուծույթի ծավալը մինչև նիշը և խառնում: 10 մլ փորձնական լուծույթին ավելացնում են Էոզինի

0,5 մլ 0,05% լուծույթ, խառնում են 1 րոպե: 15 րոպե հետո սֆեկտրոֆոտոմետրով չափում են

ստացված լուծույթի 540 նմ ալիքի երկարությամբ օպտիկական խտությունը 10 մմ հաստությամբ

կյուվետի մեջ՝ համեմատելու համար կիրառելով ջուր: Զուգահեռ չափում են նաև

պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի աշխատանքային ստանդարտ նմուշ պարունակող 10 մլ՝ փորձարկվող լուծույթի նման մշակված լուծույթ:

բ. Արդյունքների մշակում՝ պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի (X) պարունակությունը %-ով որոշում են հետևյալ բանաձևով

$$X = \frac{D \cdot m_0 \cdot 100 \cdot 200 \cdot P \cdot 100}{D_0 \cdot m \cdot 100 \cdot 200 \cdot 100} = \frac{D \cdot m_0 \cdot P}{D_0 \cdot m}$$

որտեղ

D՝ փորձարկվող լուծույթի օպտիկական խտությունն է

Do՝ պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի աշխատանքային ստանդարտ նմուշի օպտիկական խտությունն է

m₀՝ պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի ստանդարտ նմուշի կշռուկի զանգվածն է, գ,

m՝ պատրաստուկի կշռուկի զանգվածն է, գ,

P՝ պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի պարունակությունն է լուծույթում, որն օգտագործվում է պոլիդեքսամեթիլենգուանիդին հիդրոքլորիդի աշխատանքային ստանդարտ նմուշ պատրաստելու համար, %

91. Որպես վերջնական արդյունք ընդունում են երկու զուգահեռ որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև թույլատրելի տարբերությունը չի գերազանցում 0,05%:

92. N,N-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամինի զանգվածային բաժինը որոշվում է տիտրիմետրիկ մեթոդով:

1. Չափման միջոցներ, ռեակտիվներ, լուծույթներ՝

- 1) Լաբորատոր կշեռք ընդհանուր նշանակության ճշգրտության 2 դաս, ըստ ԳՕՍՍ P 53228-2008 200 գ կշռման առավելագույն սահմանով,
- 2) Բյուրեղ 1-3-2-50-0,1,
- 3) Կոնաձև կոլբա KH-1-250-24/29 TC ըստ ԳՕՍՍ 25336,
- 4) Չափիչ գլան 1-3-50 ըստ ԳՕՍՍ 1770,
- 5) Աղաթթու ըստ ТУ 6-09-25-40, 0,1N ջրային լուծույթ
- 6) Ինդիկատոր՝ բրոմֆենոլ կապույտ (մ. հ. հ.) ըստ ТУ 6-09-25-1058, 50%-ոց ջուր-սպիրտային լուծույթում 0,1 % լուծույթ
- 7) Իզոպրոպիլ սպիրտ, «ք.մ.» ըստ ТУ 6-09-402-77 կամ համարժեք մաքրությամբ
- 8) Թորած ջուր ըստ ԳՕՍՍ 6709:

2. Հետազոտության իրականացում՝ միջոցի 20-25 գ կշռուկը՝ կշռված մինչև 0,0005 գ ճշտությամբ, տեղավորում են 250 սմ³ տարողությամբ կոնաձև կոլբայի մեջ, ավելացնում 50 սմ³ իզոպրոպիլ սպիրտ, 0,5 սմ³ բրոմֆենոլ կապույտ ինդիկատորի լուծույթ և տիտրում աղաթթվի 0,1 Ն լուծույթով, մինչև լուծույթի կապույտ գույնը դեղին գունավորման փոխվի:
3. Արդյունքների մշակում: N,N-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամինի (*W* տրիամին) զանգվածային բաժինը տոկոսներով հաշվում են հետևյալ բանաձևով.

$$W \text{ (տրիամին)} = \frac{0.00997 \times V \times K}{m} \cdot 100$$

որտեղ՝ 0,0097 – N,N-բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամինի զանգվածն է՝ 1 սմ³ աղաթթվի լուծույթին համապատասխան՝ ճիշտ 0,1ն խտության,

V – ճիշտ 0,1 ն խտության աղաթթվի լուծույթի ծավալ, որը ծախսվել է տիտրման վրա, սմ³,

K – ճիշտ 0,1 ն խտության աղաթթվի լուծույթի շտկման գործակից,

m – միջոցի կշռուկի զանգված, գ:

93. Որպես հետազոտության արդյունք ընդունում են երեք որոշումների արդյունքների միջին թվաբանականը, որոնց միջև բացարձակ տարբերությունները չեն գերազանցում թույլատրելի տարբերությունը, որը հավասար է 0.3%: Հետազոտության արդյունքների թույլատրելի հարաբերական գումարային շեղումը կազմում է $\pm 4.0\%$ ՝ $p=0.95$ հավանականության վստահելի միջակայքում: